ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հավատավոր հայորդիներ, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հայ ժողովուրդը տոնում են Քրիստոսի հրաշափառ Հարության՝ Սուրբ Զատկի տոնը: Քրիստոս եկավ աշխարհ՝ սրբագործելու այն մարդկության մեղքերից, և հարություն առավ, վկայելով, որ Տիրոջ գալուստը մոտ է:

Դարեր շարունակ այս օրը մարդկության բոլոր սերունդները կարծես ականատեսն են լինում Քրիստոսի սուրբ հարությանը, ինչը դարձավ այսօրվա վարդապետության և հավատքի հիմքը:

Այսօր մենք առավել քան երբևէ մեր հայացքն ենք ուղղում Տիրոջը՝ փնտրելով նրա հովանավոր աջը, որ մասնակից լինի մեր պետության և Հայրենիքի համար կարևոր ժամանակներում կատարվող բոլոր գործերում:

Ուստի ժամանակն է լինեն կրկնակի անգամ ավելի խոնարհ և խոհուն, ապավինել Տիրոջ ամենակարող զորությանը:

Սիրելի՛ հայորդիներ, ցանկանում եմ, որ տոնի խորհուրդը բոլորիդ ընտանիքները լցնի խաղաղությամբ և ջերմությամբ, ձեր բոլոր գործերում ուղեկից լինի ձեզ առաքինությունը:

Ուրախացեք Տիրոջով և զատվեք մարդկային մեղքերից, թող խաղաղությամբ պսակվեն ձեր բոլոր գործերը:

Քրիստոս հարյավ ի մեռելոց,

Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան